



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/7480-2022

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-168-16.02.2022-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 262 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-168-16.02.2022-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նաև նախագիծ) 1-ին հոդվածով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 314-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, ընդ որում, առաջարկվող հոդվածի 1-ին մասը՝ բովանդակային առումով նույն ձևակերպմամբ՝ ինչ գործող օրենսգրքում, պատասխանատվություն է նախատեսում պաշտոնական կեղծիքի համար:

Ինչ վերաբերում է նախագծի 2-րդ և 3-րդ մասերին, ապա դրանցով առաջարկվում է քրեականացնել այնպիսի արարքները, ինչպիսիք են պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական պարտականություններից բխող և

ա. ազգային անվտանգությանն առնչվող հարցերով կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հրապարակայնորեն հայտնելը կամ

բ. հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերով կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հրապարակայնորեն հայտնելը:

Նախագծի 3-րդ մասով որպես որակյալ հատկանիշ է նախատեսված քննարկվող արարքների կատարումը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին:

Վերոնշյալի կապակցությամբ նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ մատնանշվել է, որ բանավոր հայտարարությունների, ելույթների և լրագրողական հարցերին հրապարակային պատասխանների ժամանակ պաշտոնատար անձանց կողմից հաճախ հայտնվում են կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, ինչը, ըստ նախագծի հեղինակների, ունի հանրային բարձր վտանգավորություն և պայմանավորում է նախագծի ընդունման անհրաժեշտությունը:

Չհամաձայնելով ներկայացված դիտարկումներին՝ հարկ ենք համարում նշել հետևյալը.

Օրենսգրքով արդեն իսկ սահմանված են որոշակի կառուցակարգեր, որոնք թույլ են տալիս ապահովել տեղեկություններ ստանալու սահմանադրական իրավունքի իրացումը, ինչպես նաև հանրային շահի ու ազգային անվտանգության պաշտպանությունը:

Այսպես, օրենսգրքի 148-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող և սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելու կամ անձին այդպիսի տեղեկությունը

ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելու համար, եթե դա տվյալ անձի իրավունքներին և օրինական շահերին վնաս է պատճառել:

Օրենսգրքի 278-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգ ստեղծող դեպքերի, իրադարձությունների, փաստերի կամ երևույթների վերաբերյալ տեղեկություն թաքցնելու կամ աղավաղելու համար, որը կատարվել է բնակչությանն այդպիսի տեղեկությամբ ապահովելու պարտականություն ունեցող անձի կողմից: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է քննարկվող արարքի որակյալ հատկանիշը, այն է՝ նշված գործողությունները պաշտոնական դիրքն օգտագործելով կատարելու համար:

Նույն օրենսգրքի 282-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում պաշտոնատար անձի կողմից բնակչությունից մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր ռադիոակտիվ, քիմիական, մանրէաբանական կամ այլ կենսաբանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ այլ վտանգավոր տեղեկություններ թաքցնելու կամ այդպիսի աղտոտման վերաբերյալ դիտավորությամբ ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելու համար:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ օրենսդրի կողմից արդարացիորեն քրեականացվել են միայն այնպիսի բնույթի կեղծ տեղեկություններ հայտնելու կամ հրապարակումներ կատարելու վերաբերյալ դրսևորումները, որոնք հանգեցնում են անձանց իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև անձանց, պետության կամ հասարակության շահերին որոշակի վնասի պատճառման, ինչից ելնելով՝ ունեն բարձր հանրային վտանգավորության աստիճան: Ինչ վերաբերում է պաշտոնատար անձանց կողմից իրենց լիազորությունների շրջանակներում կամ դրանցից դուրս կատարված մյուս գործողություններին, ապա վերջիններս համապատասխան հատկանիշների առկայության դեպքում ենթակա են որակման այլ հոդվածներով (պաշտոնական լիազորությունների չարաշահում, անցում և այլն):

Ուշադրության է արժանի նաև այն, որ նախագծում ներառված ձևակերպումները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին¹: Այսպես, նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցեր» ձևակերպումը խնդրահարույց է, քանի որ հանցագործության հատկանիշ համարվող տեղեկությունների շրջանակն անորոշ է և գնահատողական: Խնդիրը կայանում է նրանում, որ հնարավոր չէ հստակեցնել այն չափանիշները, որոնց առկայությունը կարող է վկայել օգտագործվող հասկացության բովանդակության մասին: «Հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցեր» ձևակերպումը չի կարող հաջողված համարվել, քանի որ այն կարող է ընդգրկել

¹ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ, մասնավորապես, որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՄԴՌ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՄԴՌ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՄԴՌ-1176, ՄԴՌ-1449):

հարցերի խիստ լայն շրջանակում, մյուս կողմից հասկանալի չէ նաև այն, թե հասարակության քանի՞ անդամ պետք է հետաքրքրված լինի, որպեսզի «հարցը» դիտարկվի այդպիսին: Այլ կերպ՝ նշվածն առավել քան վկայում է այն մասին, որ առանց նման չափանիշների հստակեցման ոչ միայն թույլ են տրվելու իրավական որոշակիության սկզբունքի խախտումներ, այլև նման իրավիճակը հանգեցնելու է քրեաիրավական նորմի կիրառման կամայական դրսևորման, ինչն անթույլատրելի է:

Տարընկալումների տեղիք է տալիս նաև «ազգային անվտանգությանն առնչվող հարցեր» ձևակերպումը: Ազգային անվտանգության հասկացությունը սահմանվում է միայն «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերությամբ՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից», սակայն այն հարցերի շրջանակը, որոնք առնչվում են քննարկվող հասկացության հետ, ևս հստակ չէ: Ասվածը պայմանավորվում է նրանով, որ ինքնին «ազգային անվտանգության» հասկացության նման ընդգրկուն ձևակերպման պայմաններում յուրաքանչյուր հայտարարություն, որն ուղղակի կամ անուղղակի առնչություն ունի վերը նշված բարիքների հետ, հանգեցնելու է այն կատարած անձի մեխանիկական քրեական պատասխանատվությանը:

Այս համատեքստում հարկ է փաստել, որ քրեական օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները՝ որպես անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքի բաղադրիչ, ավելի բարձր համապատասխանություն պետք է ունենան իրավական որոշակիության սկզբունքին, քան այլ իրավակարգավորումների դեպքերում: Ուստի, քրեաիրավական նորմերի որոշակի և կանխատեսելի լինելու պահանջների ապահովման տեսանկյունից առաջարկվող ձևակերպումները հստակ չեն, ինչը գործնականում կարող է անհամաչափորեն ընդլայնել հոդվածի կիրառման շրջանակը՝ ստեղծելով բարդություններ:

Հարկ է նաև դիտարկել նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում օգտագործվող՝ «կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հրապարակայնորեն հայտնել» բառակապակցությունը խոսքի կամ կարծիքի արտահայտման ազատության իրավունքի համատեքստում:

Այսպես, կարևոր է արձանագրել, որ ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա, ՄԻԵԿ) սահմանվում են այն իրավաչափ նպատակները, որոնց առկայության պարագայում միայն խոսքի կամ կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի,

առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Խնդրո առարկա հանգամանքի կապակցությամբ ուշագրավ պետք է համարել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ դատարան) դիրքորոշումն այն մասին, որ «Այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլև այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»²:

Վերոգրյալի համատեքստում հարկ է հիշատակել, որ խոսքի ազատության իրավունքի ոչ արդարացված սահմանափակումը կարող է նույնքան վտանգավոր լինել, որքան չարաշահումը՝ արդյունքում սպառնալիք ստեղծելով կամ վնաս հասցնելով անձանց, հասարակության և պետության շահերին:

Ինչպես ընդգծված է դատարանի երկարամյա նախադեպային դատական պրակտիկայում, Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքական խոսքի սահմանափակման հնարավորությունները քիչ են³: Այդ իսկ պատճառով դատարանը մի քանի դեպքերում եզրահանգել է, որ ընտրությունների համատեքստում կեղծ տեղեկատվության տարածումը կանխելուն ուղղված օրենսդրության կիրառումը հանգեցնում է խոսքի ազատությանն անհամաչափ միջամտության⁴։

Նշվածի համատեքստում ստացվում է, որ պաշտոնատար անձանց խոսքի ազատության բարձր պաշտպանությունը և դրանով պայմանավորված՝ կեղծ տեղեկություններ հրապարակայնորեն հայտնելը, որը հասցեատերերի կողմից հնարավոր է ընկալվի սուբյեկտիվորեն, դեռևս չունի այնքան հանրային վտանգավորություն, քանի դեռ այն վնաս չի հասցրել այն հիմնարար արժեքներին, որոնց պաշտպանության նպատակով կարող է սահմանափակվել այս ազատությունը: Մյուս կողմից, հաշվի առնելով քաղաքական գործիչների գործունեության բնույթը, հնարավոր է, որ նրանց կողմից հնչեցված կամ այլ կերպ հայտնված տեղեկությունները հանդիսանան ոչ թե հաստատական դատողություններ, այլ սուբյեկտիվ գնահատականներ կամ քննադատություններ, որոնք համատեղելի չեն խոսքի ազատության իրավունքի սահմանափակման արդարացի հավասարակշռության տեսանկյունից:

Ի վերջո նախագիծը խնդրահարույց է այն առումով, որ դրանով առաջարկվում է փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 29-րդ

² Տե՛ս Լինգենսն ընդդեմ Ավստրիայի թիվ 9815/82 դիմումով ՄԻԵԴ 08.07.1986 թվականի վճիռ, պարբ. 41, Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի թիվ 11662/85 դիմումով ՄԻԵԴ 23.05.1991 թվականի վճիռ, պարբ. 57 և այլն:

³ Տե՛ս օրինակ՝ Կոչն ընդդեմ Լեհաստանի, 1 հունիսի 2017 թ. , թիվ 34598/12, կետ 35, Բեդատն ընդդեմ Շվեյցարիայի [GC], 29 մարտի 2016 թ. , թիվ 56925/08, կետ 49, Շուրենկն ընդդեմ Թուրքիայի [GC], 8 հուլիսի 1999 թ. , թիվ 26682/95, կետ 61 և Կաստելան ընդդեմ Իսպանիայի, 23 ապրիլի 1992 թ. , թիվ 1798/85, կետ 42:

⁴ Տե՛ս Կվիտեզն ընդդեմ Լեհաստանի, թիվ 51744/99; Կիտան ընդդեմ Լեհաստանի, թիվ. 57659/00; Բրժեզինսկին ընդդեմ Լեհաստանի, թիվ 47542/07:

գլխում, որտեղ զետեղված են պետական ծառայության դեմ ուղղված արարքների համար քրեական պատասխանատվություն սահմանող հանցակազմերը: Նախագծի հիմնավորումից բխում է, որ քննարկվող արարքի քրեականացման անհրաժեշտությունը

պայմանավորվում է տեղեկություններ ստանալու սահմանադրական իրավունքի երաշխավորման պահանջից, մինչդեռ կարգավորումներն առաջարկվում են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գլխում:

Հարկ է նշել, որ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտը պետական ապարատի (կառավարման հանրային ապարատի) նորմալ գործունեությունն է: Բացի հիմնական օբյեկտից՝ նշված հանցագործությունները, կոնկրետ հանգամանքներից կախված, կարող են ունենալ նաև լրացուցիչ օբյեկտ և վնաս հասցնել մարդկանց կյանքին, առողջությանը, սեփականությանը, խախտել մարդկանց սահմանադրական և մյուս իրավունքներն ու ազատությունները: Նշվածով պայմանավորված՝ գտնում ենք, որ օրենսգրքի կառուցվածքային առանձնահատկություններով պայմանավորված՝ նախագծով առաջակվող կարգավորումը խախտում է հանցակազմի ամբողջականությունը՝ արդյունքում դուրս մղելով այն բուն հասարակական հարաբերությունների կարգավորման առարկայի շրջանակներից:

Ելնելով վերոգրյալից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է օրենսգրքի գործող հոդվածը թողնել անփոփոխ:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

№ 262 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն**

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-168-16.02.2022-ՊԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ**

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդվածը 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի Քրեական օրենսգիրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 314-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 314. Պաշտոնեական կեղծիքը կամ պաշտոնատար անձի կողմից կեղծ կամ իրականությանը չհապատասխանող տեղեկություններ հրապարակայնորեն հայտնելը.

1. Պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական պարտականություններից բխող, ազգային անվտանգությանն առնչվող կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերով կեղծ կամ իրականությանը չհապատասխանող տեղեկություններ հրապարակայնորեն հայտնելը.

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

3. Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու եւ փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաեւ տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:»

Պետության ճիշտ կառավարման բաղադրիչը ոչ միայն ժողովրդին պետության կառավարմանը մասնակից դարձնելն է, այլ նաեւ կառավարող ժողովրդի՝ ճիշտ տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովումը: Ժողովրդավար պետության հիմքը ոչ միայն խաղաղ պայմաններում տեղեկատվության ազատության ընձեռումն է յուրաքանչյուրին, այլ նաեւ պատերազմական իրավիճակում այդ իրավունքի ավելի պատասխանատու իրացումը:

ՀՀ քրեական օրենսգիրքը արգելում է տեղեկությունների թաքցման կամ կեղծման հետ կապված այնպիսի իրավահարաբերություններ, ինչպիսիք են մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը, շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը կամ դրանք դիտավորյալ աղավաղելը եւ այլն. ընդ որում՝ առանձնահատուկ է նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի կարգավորումը, որով քրեականացնում է պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաեւ կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը. պարզ ասած՝ սա թերեւ արգելում է բացառապես գրավոր ձեւաչափով կեղծ տեղեկություններ տրամադրելը, մինչդեռ բանավոր՝ հայտարարությունների, ելույթների ու լրագրողական հարցերին հրապարակային պատասխանների դեպքում, որոնք արտահայտված չեն գրավոր ձեւով, պաշտոնատար անձանց կողմից հաճախ է լինում տեղեկատվության կեղծում կամ սուտ տեղեկության հայտնում, ինչը ունի հանրային բարձր վտանգավորություն:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ բազմաթիվ պետական պաշտոնյաներ իրենց պաշտոնական պարտականություններից բխող հարցերի առնչությամբ բազմիցս հրապարակել ու հայտնել են այնպիսի կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող այնպիսի տեղեկություններ, որոնք իրենց բնույթով եւ էական վնաս են հասցրել անձանց, նրանց առողջությանը, պետության եւ հասարակության շահերին: Օրինակ՝ 2020թ փետրվարի 27-ին ՀՀ առողջապահության նախարարը հայտնում էր, որ «կորոնավիրուսը շատ վտանգավոր վիրուս չէ», իսկ 2020 ապրիլի 14 ին կրկին պնդել էր՝ «Ես նորից եմ կրկնում, որ կորոնավիրուսը հատուկ վտանգավոր վարակ չէ», իսկ 2020թ մարտի 1-ին վարչապետի պաշտոնը զբաղեցնողն անձն էր հայտարարում, որ «Կորոնավիրուսն ո՞ւմ շունն ա, որ մի հատ էլ մեր կյանքում խնդիրներ առաջացնի», ապա մարտի 12-ին ավելացրել, որ «Կորոնավիրուսը գրիպի նման վիրուս ա, խուճապ պետք չի», մինչդեռ 07.12.2021թ դրությամբ արդեն ՀՀ-ում միայն COVID-19-ից ըստ ՀՀ առողջապահության նախարարության մահացել է 7718 մարդ:

Պետական պաշտոնատար անձանց կողմից հնչած կեղծ կամ իրականությանը չհապատասխանող տեղեկություններ հրապարակայնորեն հայտնելու դեպքերը խիստ տարածված են եղել նաեւ 2020թ սեպտեմբերի 27-ին ադրբեջանի կողմից Արցախի վրա հարձակման օրվանից առ այսօր, երբ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանը ամենօրյա ռեժիմով հայտարարում էր հաղթելու մասին, օրինակ՝ 09.10.2020թ Արծրուն Հովհաննիսյանը նշում էր, որ «Ես հենց հիմա Հաղթություն եմ եւ չգիտես ինչու մենակ հայերի եմ տեսնում:», մինչդեռ Հաղթութ քաղաքի մի մասը արդեն իսկ գտնվում էր թշնամու ակնհայտ ապօրինի վերահսկողության ներքո:

Նիկոլ Փաշինյանը 16.11.2020թ հայտարարում էր, որ «վերջին 2.5 տարում իմ ունեցած շփումները ինձ մոտ ոչ մի կասկած չեն թողնում, որ պատերազմի կանխարգելումը միանաշանակ պետք է ենթադրեր հայկական կողմի հրաժարումը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակից ու տեսանելի ապագայում կարգավիճակը ճշգրտող մեխանիզմների պահանջից եւ Շուշիից», մինչդեռ վերջին միտքը հերքվել էր թե՛ ՀՀ ԱԳՆ-ի կողմից, թե՛ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետության ղեկավարի կողմից:

Սույն հայտարարությունները սպառիչ չեն եւ դրանք ոչ միայն իրականությանը չեն համապատասխանել եւ եղել են կեղծ, այլեւ էական վնաս են հասցրել թե՛ անձանց առողջությանը, թե՛ հասարակության, թե՛ ՀՀ պետական օրինական շահերին, ինչը հետագայում կանխելուն էլ ուղղված է սույն օրենքի նախագիծը: Նախագծի կարելիությունը կայանում է նրանում, որ արգելում է պաշտոնատար անձանց կեղծ տեղեկատվություն հրապարակելը, ինչը առաջին հերթին պետական իշխանության վստահելիության կարելիությունն էրաշխիքն է: